ուանդուն և ընդարձակ գործունէութեան, թէ որչափ յառաջադիմութիւն են արել այնուամենայնիւ ազատ եկեղեցիներն ի հաշիւ նորա՝ յայտնի երևեց սոցա ներկայացուցիչների մարտի 7—10-ին Բրիստոլում գումարած ընդհանուր ժողովից։ «Ազատ եկեղեցւոյ դաշնակցութիւնը» միայն հինգ տարի է ինչ գոյութիւն ունի. և արդէն մեծ դաւալ է ստացել և մեծ հեղինակութիւն ձեռք բերել։ Բրիստոլում 500 տեղական ժողովներից պատգամաւորներ կային, որոնց թիւը մինչև 700-ի էր հասնում։ Կրօնական եռանդի և քրիստոնէական զգացումների կենդանութեան կողմից ազատ եկեղեցիների գերակշռող լինելը ցոյց տալու համար բաւական է յիշել՝ որ 1897 թ.-ին հաղորդութիւն ընդունողների թիւն այստեղ եղել է 16,625,152, մինչ պետական եկեղեցւոյ մէջ 3,122,526 միայն։ Վերջին ժամանակ նոցա մէջ տեղի ունեցած փոխադարձ յարաբերութեանց մասին խօսեց ժողովի նախագահ Հիւ Պրայս Հիւս. Իսկ նախկին նախագահ անուանի Պլիֆֆոդ «եկեղեցիների միութեան» մասին խօսելով՝ այդ գաղափարի իրականացումը նորանում է տեսնում՝ որ բոլորն ընդհանուր ուժով աշխատեն իրենց Աստծուն կորցրած մարդոց կրկին գտնելու և Քրիստոսի ի հնազանդութիւն բերելու։ Այնուհետև ճառեր եղան Պրանսիոյ բողոքականների և կաթոլիկ եկեղեցւոյ կողմից նոցա կրած հալածանքի։ Ամերիկայում ազատ եկեղեցիների դաշնակցութիւն կազմելու կարիքի, ժողովրդական բարոյականութեան և դորա վերայ գործ դրուած աշխատանքի և այլ կարևոր խնդիրների մասին։ Որոշուեցաւ յաջորդ ընդհ. ժողովը գումարել Լիվերպուլում 1899 մարտ 14—16-ին։

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ԿՐՕՆԱՒՈՐՆԵՐ ՊԷՏՔ ԵՆ.

Արարատի նախընթաց համարում՝ ի նկատի ունեցանք հոգեւորականութիւնն ընդհանրապէս եւ աշխատեցինք նոցա պատրաստութեան եղանակի մասին եղած թիւրիմացութիւնները փարատել։ Մանաւորելով այժմ՝ մեր խօսքը կրօնաւորների համար՝ պիտի տեսնենք՝ որ կրկին ոչ նուազ թիւրիմացութիւնների ենք հանդիպում՝ եւ մեզ հակառակ մտածողների աւելի մեծ շրջանի հետ գործ ունինք։ Եղած քահանաներին թէեւ ամէնքը պախարակում՝ են եւ իրենց կոչման անյարմար գտնում՝ բայց գոնէ մեծամասնութիւնը լաւերի պէտքն զգում՝ է եւ խոստովանում՝։ Կրօնաւորների նկատմամբ ընդհակառակն նաեւ քահանայական հարցի պաշտպաններից շատերը՝ ինչպէս երեւաց վերջին ժամանակի լրագրական վէճերից՝ ինչպէս երեւում՝ է Պոլսոյ մամուլի մէջ լոյս տեսնող մի շարք յօդուածներից՝ այն կարծիքին են՝ որ նոքա անզգայ՝ ժողովրդից կտրուած՝ ժողովրդի պէտքերին անծանօթ՝ եւ ոչինչ բանով զոհացում՝ չտուող՝ ուրեմն եւ առհասարակ անպէտք եւ ծրիակեր մի դասակարգ են կազմում։ Այս դէպքում՝ եւս միակ ուրախալի երեւոյթն այն էր՝ որ պ. Լ. Սարգսեանի պէս ազատ խորհողների շրջանին պատկանող մի անձն հակառակ եղաւ այդ կարծիքին եւ մի շարք լուրջ խորհրդածութիւններ արաւ. ուրախալի մանաւանդ նորա համար՝ որ մեզանում՝ ահագին քանակութեամբ մարդիկ խօսքի ճշմարիտ եւ ուշադրութեան արժանի լինելը այն ժամանակ են միայն ընդունում՝ երբ ասողն իրենց հաւանած մարդն է. այդպիսիների վերայ՝ յոյս ունինք՝ բարերար ազդեցութիւն ունեցաւ Պ. Սարգսեանի լուրջ յօդուածը՝ չնայած որ պ. յօդուածագիրն՝ ի միջի այլոց՝ հոգեւորականութեան թշնամի տարրերից մէկն է համարում՝ աստուածաբանութիւնը՝ երեւի խիստ մութ եւ սարսափելի բաներ երեւակայելով այդ անուան ներքոյ։

Պ. Սարգսեան շօշափել է այն երկու էական կէտերը՝ որոնք կրօնաւորութեան խնդրի մէջ ամէնից աւելի աչքի են ընկնում՝ եւ երկու դէպքում՝ եւս ուղիղ որոշումն է տուել. նա հերքում՝ է այն անտեղի զրոյցը՝ թէ հայ կրօնաւորները կտրուած են ժողովրդից՝ եւ հաստատում՝՝ որ աշխարհից կտրուած եւ ընտանեկան հոգսերից ազատ լինելը մեծապէս նպաստել կարող է գաղափարական նպատակների ծառայելուն։ Սակայն այս առարկութիւններն աւելի լաւ ըմբռնելու եւ նոցա ճշմարտութեանը համոզուելու համար՝ պէտք է աւելի պարզ գաղափար ունենալ վա-

նական կեանքի ծագման եւ զարգացման մասին, աւելի խոր որոնել այն պատճառները, որոնք կրօնաւորական կեանք յառաջ են բերել եւ քրիստոնէական եկեղեցոյ կարեւորագոյն շարժիչ ոյժերից մէկը դարձրել։ Մեր աշակերտ Պ. Ս.-ի համառօտ ակնարկը ծանօթացնում է փոքր ի շատէ ընթերցողին նորա սկզբնական պատմութեան հետ։ — Անուրանալի է յիրաւի, որ կրօն. կեանք յառաջ է եկել աշխարհից հեռանալու, առանձնական խաղաղ կեանք վարելու ձգտումից, եւ այդ ձգտումը միայն քրիստոնէութեան յատուկ չէ։ Քաղաքակրթութեան որոշ աստիճանի վերայ գտնուող շատ ազգերի մէջ երեւան է եկել այն դարերը ժամանակներում տարբեր պատկերներով։ Մեր դարի բանասաեղծներից շատերը, որոնք յոռետես հայեացքներ ունին եւ ունայնութիւն են քարոզում՝ Դ. դարում կոգեւորուէին անշուշտ կրօն. կեանքով եւ զուցէ իրենք եւս վանք կմտնէին։ Զուր չէ որ այդ եւ յաջորդ ժամանակի քրիստոնէական եկեղեցոյ կամ՝ նոյն է թէ առնասարակ օ՛տութեան եւ զրականութեան ամենանշանաւոր ներկայացուցիչները՝ ս. Բասեղ, Գրիգորներ, Ոսկեբերան, Օգոստինոս, Հիերոնիմոս, Ամբրոսիոս Ջերմեռանդ Ջատագովներ են կրօնաւորութեան, եւ շատերը օրինակելի կրօնաւորներ։ Ժամանակի ոգին այդպէս էր ա՛տնանջում։ Ո՛չ թէ Հռոմայեցւոց կայսրներից հալածուած մարդիկ անուսաստ փախան եւ վանքեր հիմնեցին, ինչպէս յաճախ կարծում են, այլ երբ քրիստոնէութիւնը յաղթութեան դրօշակ պարզեց աշխարհային վայելքներով յոփացած յոյն-հռոմէական աշխարհում՝ ժամանակի ամենալաւ որդիները նորա շուրջը ժողովուեցան եւ զգուանքով սկսան նայել այն ամէնի վերայ, ինչ որ դուրսը աշխարհը նոցա տալիս էր՝ սկսան այդ աշխարհի մէջ առանձնանալ, այնպիսի կայաններ հաստատել, ուր քրիստոնաբիւնութեան համապատասխան կեանք վարել կկարողանային։

Կրօնաւորական՝ մանաւանդ թէ առանձնական կեանքն անշուշտ շատ վտանգաւոր կողմեր եւս ունի։ Յայտնի ճշմարտութիւն է, որ մարդ ինքն է իր ամենամեծ թշնամին։ այնտեղ, ուր նա միայն իր մասին է մտածում՝ իր հետ միայն գործ ունի՝ հեշտութեամբ զարգանալ կարող է նորա առաջին եւ գլխաւոր մոլութիւնը՝ եսական զգացումը։ Այդ պատճառաւ եւ բոլոր ախտերը, որոնք արդիւնք են եսասիրութեան՝ ամբարտաւանութիւն, փառամոլութիւն, ընչասիրութիւն, նախանձ, նենգութիւն, անգթութիւն եւլն, զուցէ ո՛չ մի դասակարգի մէջ այնպիսի հրէշաւոր ծաւալով եւ տգեղ գոյներով չեն յայտնուել, ինչպէս կրօնաւորական շրջաններում։ Ասացինք, որ կրօնաւորական, առանձնական կեանք վարելու ձգտումը յատուկ չէ միայն քրիստոնէական եկեղեցուն, անմիջապէս եւ անհրաժեշտաբար նորանից չի բղխում։ բայց քրիստոնէութեան մէջ կայ յիրաւի մի տարր, որ դէպի առանձնութիւն եւ ճգնութիւն է մղում՝ նիւթեղէն աշխարհի ու նորա փառքերի համար տածած արհամարհանքն է այդ, կարօտը դէպի մի աւելի բարձր, երանաւէտ, հնաշխարհիկ կեանք։ Ուր այսպիսի զուտ քրիստոնէական կամ՝ զուտ բնական զգացումներ եւ աւետարանի բարոյական սկզբունքներն են իշխում՝ այնտեղ միայն եւ կրօնաւորական կեանքը բարերար ուղղութիւն ստանալ եւ բարի պտուղներ բերել կարող է. այնտեղ նա կյաղթէ վերոյիշեալ շար հակումներին եւ միջոց կդառնայ ամենամաքուր քրիստոնէական առաքինութիւն զարգացնելու, քրիստոնէական ամենամեծ գաղափարն՝ սիրոյ եւ ողորմածութեան գաղափարը, ընդարձակ սահմաններում իրագործելու։ Առանձնութիւնը կամ՝ վանքը միայն վատ զգացումների զօրանալուն չէ նպաստում, այլ նաեւ լաւերի. աշխարհից կտրուած, աշխարհից ոչինչ չահ չունեցող մարդն աւելի տրամադիր պէտք է լինի դէպի գաղափարականը ձգտելու. միայն պէտք է նորան այնպիսի վիճակի մէջ դնել, որ այդ ձգտումը անընդ ստանայ եւ աճէ արագութեամբ։ Իսկ այդ լինելու համար հարկաւոր է կրկին, որ նա շփումն ունենայ մարդոց հետ, նոցա ցաւերին կարեկից եւ նոցա յաջողութեան աշխատակից ու խնդակից լինի։ Աշխարհից կտրուած լինել եւ այնուամենայնիւ աշխարհի մէջ՝ ահա, ինչպէս առհասարակ բոլոր քրիստոնեաների, այնպէս

եւ մասնաւորապէս կրօնաւորների առաջնորդող սկզբունքը։ Բաժանման վերջին ժամին, երբ Փրկիչը հանդիսաւոր կերպով աղօթում էր իւր աշակերտների համար. «Ո՛չ զայս աղաչեմ առաց, զի բարձցես զնոսա յաշխարհէ, այլ զի պահեսցես զնոսա ի չարէ. յաշխարհէ աստի չեն, որպէս եւ ես չեմ՝ յաշխարհէ. սուրբ արա զնոսա ճշմարտութեամբ քով, զի քո բանդ ճշմարտութիւն է»։ Լինել ուրեմն աշխարհի մէջ եւ զերծ մնալ չարի բռնութիւնից, ճշմարտութեան՝ Աստուծոյ խօսքի զօրութեամբ աճելով, սրբուիլ հեռացնետ եւ սրբութեան օրինակ, ճշմարտութեան քարոզիչ լինել շրջապատողների համար — այս է գաղափարական այն ուղին, որ գծել է Փրկիչը ամէնից աւելի կրօնաւորների՝ կուսական հոգւով Իրեն պաշտողների առաջ. իսկ այդ սկզբունքի համեմատ աշխատել են կազմակերպել վանքերը ս. Բարսեղ եւ նորա իսկական հետեւողներն արեւելքում՝ եւ արեւմուտքում։

Կարելի է համարձակութեամբ ասել, որ եթէ կայ մի եկեղեցի, որ այս սկզբունքն ուղիղ մտքով գործադրել է աշխատել՝ Հայոց եկեղեցին է այդ։ Որչափ պատմութիւնը միջոց է տալիս մեզ հեռու անցեալի մէջ խորասուզուելու՝ տեսնում՝ ենք, որ սկզբնական ժամանակներից ի վեր Հայոց վանքերը եղել են ո՛չ թէ աշխարհից փախած եւ աշխարհի համար անպէտք մարդոց ապաստանարան, այլ հովանի ամեն տեսակ բարեգործական հաստատութեանց, կրթարան ու դպրատուն գրականութեան եւ գիտութեան ամենալաւ ներկայացուցիչների համար։ Հայ կրօնաւորը ոչ հնում եւ ո՛չ մինչեւ այս վերջին ժամանակները հեռու ու անջատուած չէ եղել իւր ժողովուրդից. եթէ մեր պատմութիւնից ընտրենք տասն այնպիսի անձնաւորութիւններ, որոնք հայ ժողովրդի հարազատ զաւակներ են, նորա բոլոր լաւ կողմերի մարմնացնողն իրենց մէջ, անձնուէր պաշտպանը նորա իսկական շահերի՝ հինգը եւ աւելին նոցանից անպատճառ կրօնաւորներ կլինին։ Մ՚իջին դարերում՝ մեր վանքերը, օտար ազդեցութեան ներքոյ, փոխել են յիրաւի փոքր ինչ իրենց կերպարանքը եւ ընծայել զուցէ կրօնաւորական կեանքի պակաս հաճելի երեւոյթներ, որոնց հետքերը դեռ մնացել են. բայց նոցա իսկական ընդարութիւնը չի փոխուել եւ չի կարող փոխուել։ Այս տարուայ մեծի պահոց մի քարոզի մէջ մեր Վեհափառ Հայրապետը մի գեղեցիկ օրինակ բերաւ պարզ՝ իւր ժողովրդի հետ ապրող հայ կրօնաւորի, որի համար իւրաքանչիւր հայի տուն իւր տունն է, իւրաքանչիւր հայի ցաւ իւր ցաւը, որին ամէնքը ճանաչում՝ են եւ սիրում՝ նորա անպաճոյճ խրատներով հրահանգուում՝ եւ միխիթարուում՝ նորա օրհնած հացն անուշութեամբ վայելում՝։ Դժբաղդաբար այդպիսի տիպերը պակաս են այժմ՝ մեր մէջ եւ աւելի կպակասեն, քանի որ կանխակալ կարծիքներով պաշարուած, օտարի մասին լսածն առանց այլեւայլութեան իւրայինների վերայ փոխադրող անգլուխ մարդիկ ջանք չեն խնայի իբրեւ բարոյական հրէշներ ներկայացնելու կրօնաւորներին եւ ժողովրդին սառցնելու նոցանից. բայց, յուսով ենք, ազգային եկեղեցոյ ոգին կյաղթէ կրկին՝ կվերանորոգէ ու կամրապնդէ նոցա մէջ եղած անխզելի կապը։

Յամենայն դէպս միայն մեզանում՝ մեր եկեղեցին ու ժողովուրդը շրջապատող պայմանների շնորհիւ չէ միայն, որ կրօնաւորութիւնը մի օգտակար եւ անհրաժեշտ տարր է կեանքի՝ ինչպէս լսում՝ ենք յաճախ նորա սակաւաթիւ պաշտպանների կողմից իսկ, այլ ամենաքաղաքակրթուած աշխարհներում՝ եւս զգում՝ են նորա կարիքը։ — Յայտնի է որ Գերմանիայում՝ աստուածաբանութեան ուսանողների մեծ մասը համալսարանական կանոնիտատի քննութիւն բռնելուց յետոյ, աշխատում՝ են որքան կարելի է շուտ նշան դնել եւ երդմամբ սպասում՝ են այն օրին, երբ մի գիւղում՝ պաստորի կամ՝ օգնականի պաշտօն կստանան եւ պակուելով՝ համեստապայլ կենակցի հետ մի անկիւն քաշուած, խաղաղ ու երջանիկ կեանք վարել կսկսեն։ Քիչ չեն այնպիսի տաղանդաւոր երիտասարդներ, որոնք կարող էին մեծ աշխարհի հրապարակի վերայ ընդարձակ ասպարէզ յուսալ, բայց գերադասել են գիւղական պաստորի համեստ կեանքը։ Եւ յիրաւի դժուար կլինէր որ եւ է տեղ, որ եւ է դասակարգի մէջ մարդիկ գտնել, որոնք աւելի

երջանիկ, աւելի գեղեցիկ՝ կաւելացնենք նաեւ, աւելի օգտակար կեանք վարէին քան այդ համեստ պատտորները։ Այնուամենայնիւ մեզ պատահել է խօսակցութիւն ունենալ բարձր դիրքի տէր եւ լուրջ մտածող գերմանացիների հետ, որոնք ցաւ են յայտնում երիտասարդ աստուածաբանների շուտ ամուսնանալուն եւ շամուսնացած պատտորների խիստ տակաւաթիւ լինելուն համար, եւ այդ հանգամանքը բողոքական եկեղեցւոյ արտաքին աշխարհի հետ շփուելիս ցոյց տուած անգօրութեան գլխաւոր պատճառներից մէկն են համարում։ — Որպէսզի մի բարդ կազմակերպութիւն ունեցող հաստատութիւն պահպանուի եւ յառաջադիմէ՝ անհրաժեշտ է որ ոչ միայն նորա առանձին առանձին մասերը լաւ կառավարուեն, այլ որ ամբողջը իւր ղեկավարը, իւր որոշ ուղղութիւնը, իւր առաջնորդող գաղափարը, իւր ներքուստ մղող եւ կենդանութիւն տուող ոգին ունենայ՝ հարկաւոր են մարդիկ, որոնք ընդհանուրի վերայ են ուշադրութիւն դարձնում՝ ընդհանուրին ոյժ տալիս։ Իսկ այդպէս լինել կարող են ընականաբար աւելի նորա, որոնք մանաւոր հոգացողութիւններից ազատ են ըստ կարելոյն. որոնք կապուած չեն մի կտոր հողի կամ ընտանեկան նեղ շրջանի հետ՝ անկարող հեշտութեամբ տեղից տեղ շարժելու, հեռու եւ մօտիկ հատարակաց պէտքերին հատնելու։ Վանական կեանքն ամենամեծ յարմարութիւններն ունի այդպիսի մարդիկ պատրաստելու։ Եթէ կաթոլիկ եկեղեցին բոլոր հոգեւորականներին պարտաւորեցնելով ամուրի կեանք վարել՝ նպատակ ունի աշխարհից անջատուած եւ աշխարհի ղէմ իւր ընդհանուր շահերի համար կռուող մի բանակ կազմել նոցանից՝ մեր եկեղեցին այդպիսի նպատակ երբէք չի ունեցել եւ չի կարող ունենալ. այստեղ ասպարէզը բաց է հաւասարապէս ամուրիների եւ ամուսնացածների համար՝ իւրաքանչիւր ոք թող իւր հակումներին եւ ընդունակութիւններին նայէ։ Քահանայ դառնայ նաեւ իւր ծխականների նեղ շրջանում՝ ապատաւորէ Տիրոջ, թէ վարդապետ լինի եւ աշխարհէ աշխարհ շրջելով Տիրոջ աւետարանը քարոզէ կամ մի ամբողջ վիճակի ու թեմի ժողովուրդ հովուէ՝ միեւնոյն է. երկու դէպքում՝ եւս հաւատարիմ՝ ապաստաւորներ է պահանջում՝ Աստուած եւ նոցա հաւատարմութեան չափով վարձատրում։ բայց հարկաւ որշափ ծանր է լուծը, նոյնչափ մեծ է եւ վարձատրութիւնը։

Ինդիրն ուրեմն միայն նորա մասին է, թէ ժամանակակից վանականներն որշափ հաւատարիմ՝ են իրենց կոչման՝ մինչ կոչման օգտակարութեան եւ անհրաժեշտութեան դէմ՝ ոչ մի առարկութիւն լինել չի կարող։ Ցիրաւի վեմ՝ կոչում՝ է այդ եւ նորա վեմութեան համապատասխան արժանիք է պահանջուում՝ որ հեշտ չէ գտնելը։ Ո՞վ է մեղաւոր, եթէ մի ժողովրդի մէջ այնքան պակաս է գաղափարի ոյժը, ընդհանուրի օգտին ծառայելու տենչը, որ քիչ են գտնուում՝ այդտեղ կամ՝ ամենեւին չեն գտնուում՝ իսկական կրօնաւորութեան՝ այդպիսի մի գաղափարական կոչման, ձգտող մարդիկ։ Մի ժողովուրդ, որի մէջ այն հայեացքն է իշխում՝, թէ ամեն մարդ իւր շահը պէտք է որոնէ. որ վանք կամ ուրիշ նման ասպարէզ մտնող զաւակին սուզ ու շիւանով է ճանապարհ դնում՝ կորած համարում՝ կտայ ընականաբար այնպիսի մարդիկ միայն, որոնք այդ ասպարէզներն եւս իրենց շահի համար գործ դնել կաշխատեն։ Բայց մենք կասենք, որ վանական կոչումն այնքան վեմ՝ է եւ Հայոց վանքերի անցեալն այնքան փառաւոր, որ աչք ունեցողը նոցա մեծ ազդեցութիւնը կտեսնէ նաեւ ներկայ անարժան համարուած սերունդի վերայ։ Եթէ կան անպէտք վանականներ, այդ նշանակում՝ է սովորաբար, որ նորա ուրիշ ասպարիզի վերայ առաւել անպէտք կլինէին. ըստ մեծի մասին նորա աւելի գործ են կատարում՝ եւ աւելի օգտակար են հասարակութեան, քան կլինէին աշխարհում։ Իսկ իբրեւ անգործ եւ ուրիշի հաշուով փարթամ՝ կեանք վարող ներկայացնել ամբողջ դասակարգը՝ բոլորովին անիրաւ զրպարտութիւն է այդ։ Գիտե՞ն արդեօք այդպէս խօսողները, որ Մայր Աթոռի ամբողջ միաբանութիւնն իւր եպիսկոպոսներով եւ իւր Հայրապետով մէկ տեղ այնչափ ծախս չունի, որչափ ծախսում՝ է օր. Բագուի մի հարուստ իւր եւ իւր տան վերայ։ Բայց այդ հարուստը համարում՝ է իւր արդար աշխատանքով

ապրող մարդ. հասարակ բանուորը, որի քրտինքով վաստակել է նա իր միլիոնները եւ ապրում է իրօք անգործ եւ անվրդով՝ ներան բանալ նորա դէմ եւ մեղադրել ծրիակերութեան համար չի համարձակուի. իսկ երբ տարին մի անգամ ժամ զալով մի կոպէկ է ձգում զանձանակը՝ համարձակ կիսօսէ, իբրեւ իւր ծառաների վերայ կնայէ եւ հաշիւ կպահանջէ քահանայից ու վարդապետից, որոնք, եթէ ուրիշ բան իսկ չլինի, զոնէ առաւօտ երեկոյ ժամ են գնում՝ եկ. կարգեր կամ վանական պարտականութիւններ են կատարում, հոգեւոր կառավարութիւն կամ կոնսիստորիա են իջնում։ Ինչիցն է այդ. անշուշտ նորանից, որ հոգեւորականն առհասարակ կամ կրօնաւորը իրօք հասարակութեան օգտին է ծառայում, որ նա ապրում ու գործում է ամէնքի աչքի առաջ եւ ամէնքին պատասխանատու լինելու գիտակցութեամբ։ Բայց հասարակութիւնն եւս այդ իմանալով պէտք է գնահատել կարողանայ իւր տեսած ամենափոքր բարիքն անգամ՝ եւ եթէ չի տեսնում կամ քիչ է տեսնում՝ պէտք է աշխատէ աւելի լաւերին յառաջ քաշել եւ քաջալերել, իւր այն թերութիւնների վերայ ուշադրութիւն դարձնել, որոնք արգելք են լինում այդպիսիների յառաջ գալուն՝ ոչ թէ մէջտեղից վերցնել այն դատակարգը, որի կոչումն է ընդհանրութեան մտին հոգալ եւ ընդհանուր բարիքն աւելացնել։ Չրիակերներ շատ կան աշխարհիս մէջ՝ շատ են հասարակութեան անպէտք անդամներ. բայց նոցա ուրիշ տեղ որոնելու է։

ՄԵՐ ԸՆԹԱՑ.

Գրեթէ ամբողջ վերջին ամիսը Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռում անցրեց, շատ կարճ միջոցներ միայն բացակայելով Բիւրական եւ Եղվարդ գնալու համար։

— Մայիսի 11-ին ս. Էջմիածին ուխտ եկաւ այրի Տիկին Եկատերինէ Նադիրեան, ա. Մ. Մելիքեանի, պ. Հ. Գրիգորեանի եւ Նորա Տիկնոջ ուղեկցութեամբ։ Համբարձման տօնին Մայր Տաճարում մատուցած ս. պատարագը ընդունելով ի յիշատակ իւր հանգուցեալների՝ Տ. Եղիշեան հոգաց նաեւ միաբանական ճաշի ծախքը։ Ճաշի միջոցին, ուր բացի բոլոր միաբաններից հիւրեր եւս ներկայ էին, Գեր. Սուքիասս արքեպիսկոպոս յիշելով եւ գրուատելով Մեծարոյ Տիկնոջ եւ իւր հանգուցեալ ամուսնոյ բարեմասնութիւններն ու բարեգործութիւնները, իբրեւ այնպիսի անձանց, որոնք միացրել կամ միացնում են իրենց մէջ հոգւոյ, մարմնոյ եւ ընչից երրակի բարիքը միանգամայն՝ յայտնեց ի միջի այլոց, որ Տիկինը 1000 ր. նուիրել էր ի տարաժդրութիւն Նորին Վեհափառութեան, եւ ուրիշ նուէրների հետ խոստացել էր մի նշանաւոր կտակ անել բարեգործական նպատակներով. առաջարկեց ապա բարեպաշտ հիւրի եւ իւր ուղեկիցների կենացը։

— Գեր. Անանիա եպիսկոպոս, որ ժամանակաւորապէս Շուշի էր գնացել, ողջամբ Մայր Աթոռս ժամանեց։

— Յունիս 3-ին մեկնեց Արժ. Թովմա վարդապետ Բաղդասարեան՝ Սոֆիան գնալու համար վանահօր պաշտօնով։

— Յունիս 5-ին մեկնեց Գրիգորիս Ծ. վարդապետ Տէր Ստեփաննոսեան՝ կարգուած լինելով վանահայր Ագուլեաց ս Թովմա առաքելոյ վանքի. իսկ յունիս 10-ին Պարսկաստան ուղեւորուեցաւ Արժ. Մաշիկ վարդապետ Դաւեան, որ նշանակուած է Սալմասի վիճակի փոխանորդ։

Ս. Հռիփսիմեանց, ս. Գայիանեանց եւ ս. Յովհաննու ու Աթանագինէի տօները կատարուեցան սովորական հանդիսով, այդ սուրբերի անուան նուիրուած վանքերում (վերջին տօնը ս. Շողակաթի վանքում)։ Ս. Հռիփսիմէի տօնին Վեհափառ Հայրապետի կարգադրութեամբ հոգեհանդիսատ կատարուեցաւ նորոգ հանգուցեալ վանահայր Տ. Երեմիա արքեպիսկոպոսի գերեզմանի վերայ։

— Ս. Լուսաւորչի «Ելն ի վիրապէն» տօնի օրը ս. պատարագից յետոյ Նորին Սրբու-